Ինստիտուտ - Խորացնել ուսումնառության փորձառությունը

Ինստիտուտի «Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացը

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Ընդունվում են դիտողություններ և ուղղումներ: Խնդրում ենք ուղարկել դրանք հետևյալ հասցեով, ներառելով սխալները.

Seminaries and Institutes of Religion Curriculum Services
50 East North Temple Street
Salt Lake City, Utah 84150-0008
USA
Email: ces-manuals@ldschurch.org

Խնդրում ենք նշել ձեր անունը, ազգանունը, հասցեն, ծուխը և ցիցը:

Չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը: Ապա առաջարկեք ձեր դիտողությունները:

© 2016 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Տարբերակ 1, 11/16

Անգլերենի հաստատումը. 8/16
Թարգմանության հաստատումը. 8/16
Institute Elevate Learning Experience-ի թարգմանությունը
Armenian
PD60002572 201

Բովանդակություն

Նախաբան V
Հիմնական դասընթացի հարցեր 1
Հավերժական ընտանիքը (Կրոն 200) 4
Վերականգնման հիմնադրույթները (Կրոն 225) 7
Հիսուս Քրիստոսը և հավերժական ավետարանը (Կրոն 250) 11
Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը (Կրոն 275) 15
Հիմնական ընտրովի դասընթացի հարցեր 18
Դասընթացի ուսումնասիրության օրագիր 22
Ստեղծել հարմարություններ հաշմանդամ ուսանողների համար 24

Ինստիտուտի «Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացի նախաբանը

Խորացնել ուսումնառության փորձառությունը (ԽՈՒՓ) դասընթացի նպատակն է՝ ուսանողներին հնարավորություն ընձեռել Աստծո խոսքի վերաբերյալ իմաստալից փորձառություններ ձեռք բերել: Ուսանողներն ամենայն հավանականությամբ կհասնեն սրան, երբ նրանք համակողմանի հասկանան, կիրառեն Հիսուս Քրիստոսի ուսմունքները և կիսվեն դրանցով: Յուրաքանչյուր դասընթացին միավորներ վաստակելու համար պահանջվում է ավարտել ԽՈՒՓ-ի հետևյալ երեք տարբերակներից մեկը.

1. Խորացնել ուսումնառության հարցերը. ուսանողները խորհում են և պատասխանում ուսումնասիրության հարցերին դասընթացի ընթացքում: Չորս հիմնական դասերից յուրաքանչյուրի համար կան հատուկ հարցեր, ինչպես նաև մի հիմնական ընտրովի տարբերակ՝ մյուս բոլոր դասընթացների համար: Ստորև գտնվում են ուսումնասիրության հարցերի կապուղիները:

   Հավերժական ընտանիքը (Կրոն 200)

   Վերականգնման հիմունքները (Կրոն 225)

   Հիսուս Քրիստոսը և հավերժական ավետարանը (Կրոն 250)

   Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը (Կրոն 275)

   Հիմնական ընտրովի դասընթացներ

2. Դասընթացի ուսումնասիրության օրագիր. ուսանողները կանոնավոր գրի են առնում այն, ինչ սովորում են, ինչպես են նրանք կիրառում, այն և ինչպես են նրանց փորձառությունները զորացնում իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոս:

3. Անձնական ուսումնառության նախագիծ. ուսանողները ծրագրում և ավարտում են մի անձնական ուսումնառության նախագիծ, որն արժանացել է իրենց ուսուցչի հավանությանը: Նախագիծը ցույց է տալիս դասընթացում ներկայացված վարդապետությունների և սկզբունքների ուսումնասիրությունն ու կիրառումը և ամփոփում է, թե ինչպես է զորացվել ուսանողների հավատքն առ Հիսուս Քրիստոս:

Որպեսզի ուսուցանեք, թե ինչպես օգտագործել « Խորացնել ուսումնառության փորձառություն»-ը , դիտեք “How to Use the Elevate Learning Experience” տեսանյութը (LDS.org):

Ուսանողները ձեռք կբերեն առավելագույնը այս փորձառությունից, եթե նրանք վաղ սկսեն, կանոնավոր աշխատեն դրա վրա , որոնեն արձագանքներ, կիսվեն իրենց փորձառություններով իրենց ընտանիքի և ընկերների հետ, ինչպես անհատապես, այնպես էլ սոցիալական կայքերում: Դասաժամը կարելի է այնպես պլանավորել, որ հնարավորություններ ընձեռվեն ուսանողներին բացատրելու, կիսվելու և վկայելու այն մասին, թե իրենք ինչ են սովորել Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին: Յուրաքանչյուր դասից հետո ուսանողները կարող են ավելացնել կամ վերանայել իրենց անձնական ուսումնառության նախագծերը, որպեսզի ցույց տան ավետարանի սկզբունքների վերաբերյալ իրենց անձնական հասկացողությունն ու կիրառությունը:

Դասընթացի վերջում խնդրեք ուսանողներին հանձնել իրենց ավարտած փորձառությունների ծրագիրը կամ զեկուցել ավարտի մասին: Չնայած ուսուցչի կարծիքը կարևոր է, հիշեք, որ փորձառությունների հիմնական նպատակը ուսանողների հավատն առ Հիսուս Քրիստոս ուժեղացնելն է: Դա տեղի է ունենում, երբ ուսանողները գնահատում են հիմնական վարդապետության և սկզբունքների վերաբերյալ իրենց հասկացողությունը և կիրառում են դրանք իրենց կյանքում: Հատուկ կարիքներ, հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող ուսանողների համար հարմարությունների ստեղծումը կարող է անհրաժեշտ լինել օգնել նրանց ԽՈՒՓ դասընթացն ավարտելու համար:

Խնդրում ենք ուղարկել դրանք si-research@ldschurch.org:

Հիմնական դասընթացի հարցեր

Ուսուցչի հրահանգներ

«Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացը նախատեսված է ինստիտուտի ուսանողների համար, ովքեր անցնում են Հիմնական դասընթացը: Ուսումնառության այս փորձառությունը բաղկացած է մի շարք հարցերից, որոնք հանձնարարված ընթերցանության և դասարանում մասնակցության կարևոր լրացումն են հանդիսանում: Ուսանողների պատասխանները երկար չպիտի լինեն, բայց պիտի ներկայացնեն ուսանողների լավագույն ջանքերը: Ձեր օգնությամբ ուսանողներին խնդրում ենք այս դասընթացի ընթացքում գրել, ստուգել, ուղղել և ներկայացնել այս հարցերի պատասխանները: Թեպետ ուսանողներին խրախուսում ենք գրել իրենց պատասխանները դասից դուրս, բայց կարող եք ձեր հայեցողությամբ դասից որոշ ժամանակ տրամադրել այդ աշխատանքին:

Չնայած ղեկավարելու և կատարմանը հետևելու շատ մանրամասներ պետք է հարմարեցվեն անհատական ծրագրերին, հետևյալ քայլերը ևս կօգնեն ձեզ և ձեր ուսանողներին հաջող փորձառություն ունենալ:

1. *Պատրաստվեք.* Դասընթացը սկսելուց առաջ ուսանողների համար նշանակեք ստուգման ամսաթիվը և վերջնաժամկետը, ըստ որոնց նրանք պիտի ներկայացնեն յուրաքանչյուր հարցի պատասխանը: Որոշ ուսուցիչներ գուցե ցանկություն ունենան ստուգել կամ ստանալ բոլոր պատասխանները մեկ օրում՝ կիսամյակի վերջում, մյուսները գուցե որոշեն պարբերաբար ստուգել և ստանալ պատասխանները դասընթացի ընթացքում: Նյութի վերաբերյալ հարցերն ուսանողներին հանձնարարելուց առաջ հավաստիացեք, որ անցել եք դասընթացի տվյալ հատվածի նյութը:
2. *Սահմանեք հստակ ակնկալիքներ.* Դասընթացի սկզբում ուսանողներին տվեք ««Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասագրքի մեկական օրինակ: Մի քանի րոպե հատկացրեք, որպեսզի հստակ բացատրեք այդ փորձառության նպատակը և ակնկալիքները, նաև նշանակեք դասընթացի նյութը վերստուգելու և պատասխանները հանձնելու օրերը:
3. *Լինել հետևողական.* Դասընթացի ժամանակ մշտապես քաջալերեք և օգնեք բոլոր ուսանողներին, երբ նրանք աշխատում են նշված ժամկետին ավարտել « Խորացնել ուսումնառության փորձառություն»-ը:
4. *Վերստուգում.* Ուսանողներին հիշեցրեք և հանձնարարեք դասարան բերել իրենց պատասխանները վերստուգման համար նախատեսված օրերին: Վերստուգման նպատակն է օգնել ուսանողներին գնահատել իրենց պատասխանները և կիսվել իրենց սովորածով: Ուսանողները կարող են օգտվել առիթից և ստուգել միմյանց աշխատանքները զույգերով կամ փոքր խմբերով: Ստուգումը ավելի իմաստալից

կդարձնեք, եթե խնդրեք ուսանողներին բացատրել, կիսվել և վկայել իրենց սովորածի մասին (տես *Gospel Teaching and Learning: A Handbook for Teachers and Leaders in Seminaries and Institutes of Religion* [2012], 10): Վերստուգման ժամանակ դուք պետք է 10-15 րոպե տրամադրեք յուրաքանչյուր հարցին: Ուսանողներին խրախուսվում է նախքան վերջնական պատասխանների հանձնումը, անհրաժեշտության դեպքում, ուղղել իրենց պատասխանները:

5. *Հանձնում.* Դասընթացի վերջում ուսանողները ձեզ են հանձնում են իրենց պատասխանները: Ուսանողները կավարտեն «Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացը, երբ բավականաչափ ջանքեր կներդնեն, գրելով, ստուգելով և հանձնելով դասընթացի բոլոր հարցերի իրենց պատասխանները, որոնք էլ կգնահատվեն ուսուցչի կողմից: WISE Gradebook-ում գրանցեք նրանց, ովքեր հանձնել են իրենց պատասխանները:

Նշում. Հավաստիացեք, որ հատուկ կարիքներով, հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող ուսանողներն ապահովված են հարմարություններով, որոնք անհրաժեշտ են այս գնահատմանը իրենց հասակակիցների հետ հավասար հիմունքներով մասնակցելու համար: Գուցե կարիք լինի նյութը խոշոր տառերով տպել կամ լսողական տարբերակով ապահովել, հնարավորություն տալ ուսանողներին գրել պատասխանները ուրիշների օգնությամբ, թույլ տալ նրանց գրելու փոխարեն բանավոր պատասխանել կամ թելադրել իրենց պատասխանները գրագրին կամ ձայնագրիչին: Այցելեք lds.org/topics/disability կայք և գտեք ընդհանուր տեղեկություններ հաշմանդամություն ունեցող անհատներին օգնելու համար:

Ուսանողի հրահանգներ

Լավացնել ուսումնառության փորձառությունը դասընթացը բաղկացած է մի շարք հարցերից, որոնք դասարանում ձեր մասնակցության և հանձնարարված ընթերցանության ուսումնասիրության կարևոր լրացումն են հանդիսանում: Դասընթացի ընթացքում, աշխատելով այդ հարցերի պատասխանների վրա, դուք կկարողանաք խորացնել ձեր հասկացողությունը և ավետարանի կիրառումը՝ խորհելով ձեր սովորածի շուրջ և կիսվելով դրանով: Յուրաքանչյուր հարցի համար կատարեք հետևյալ քայլերը.

1. *Գրեք* ձեր իսկ խոսքերով ձևակերպված պատասխան յուրաքանչյուր հարցին: Հիմնավորեք ձեր պատասխանները սուրբ գրություններով և մարգարեների խոսքերով: Հավաստիացեք, որ ձեր պատասխանները տեղին են կիսվելու համար:

2. *Վերստուգեք* ձեր պատասխանները, բերելով դրանք դասարան ձեր ուսուցչի կողմից նշված օրը:

3. *Ուղղեք* ձեր պատասխանները, անհրաժեշտության դեպքում հիմնվելով վերստուգման վրա:

4. *Հանձնեք* բոլոր հարցերի ձեր վերջնական պատասխանները ուսուցչի կողմից նշված օրը:

Պատասխանները պետք է լրացվեն դասից դուրս, եթե այլ կերպ հանձնարարված չէ: Հատուկ կարիքի, հաշմանդամության կամ առողջական խնդիրների դեպքում խոսեք ձեր ուսուցչի հետ, որպեսզի նա հարմարություններ ստեղծի և օգնի ձեզ իրականացնել այս փորձառությունը: Ձեր ուսուցիչը ցանկանում է, որ դուք հաջողությամբ հանձնեք այս փորձառությունը և պատրաստ է ամեն կերպ օգնել ձեզ:

Հավերժական ընտանիքը (Կրոն 200)

Հարցեր

1. Ինչո՞ւ է ընտանիքն այդքան կարևոր Երկնային Հոր երջանկության ծրագրում:

   Ձեր պատասխանը պետք է ընդգրկի հետևյալը.

   - Փրկության ծրագրի հիմնական նպատակների նկարագրությունը:
   - Բացատրություն, թե ինչպես են արդարակյաց ընտանիքներն օգնում իրականացնել այդ նպատակները ողջ հավերժության ընթացքում:
   - Բացատրություն, թե ինչու է ընտանիքի վերաբերյալ վարդապետությունը կարևոր ձեզ համար և ձեր հավերժական առաջընթացի համար:
   - Բացատրություն, թե ինչպես է փրկության ծրագրում ընտանիքների կենտրոնական դերի ըմբռնումը ներգործել այս կյանքում կատարած ձեր ընտրությունների վրա:

2. Որո՞նք են ամուսնության համար Տիրոջ սահմանած չափանիշները:

   Ձեր պատասխանը պետք է ընդգրկի մի բացատրություն.

   - Ամուսինների և ծնողների աստվածային դերի ու պարտականությունների վերաբերյալ:
   - Ամուսնության և ընտանիքի մեջ Փրկիչի դերի վերաբերյալ:
   - Օրենքների, որոնցով ղեկավարվում է մաքրաբարոյությունը և հավատարմությունը ամուսնության մեջ և այդ օրենքների հավերժական բնույթի վերաբերյալ:
   - Ուղիների վերաբերյալ, որոնցով դուք կարող եք կիրառել այս սկզբունքները, որպեսզի նախապատրաստվեք կամ բարելավեք ձեր ամուսնությունը և ընտանիքը:

3. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագիրը (*Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2010, 129) ինչպիսի՞ դրական ազդեցություն է ունեցել ձեր կյանքի վրա այս դասընթացի ընթացքում:

   Դուք կարող եք հիմնվել ձեր նախկին պատասխանների վրա, կամ կապել գաղափարներ ձեր նախորդ պատասխանների հետ, կամ գրել նոր թեմայի շուրջ: Ձեր պատասխանը պետք է ընդգրկի հետևյալը.

   - «Ընտանիք՝ հայտարարության աշխարհին» հռչակագրի որոշակի սկզբունքի կամ վարդապետության բացատրությունը, որը

կզուգորդվի սուրբ գրությունների կամ վերջին օրերի մարգարեների խոսքերի մեջբերմամբ:

- Օրինակ, թե ինչպես մարգարեների խորհրդին հետևելով, կարող եք ավելի լավ հասկանալ ձեր ընտրած սկզբունքը կամ վարդապետությունը:
- Օրհնությունների օրինակներ, որոնք դուք կամ ուրիշներն են ստացել՝ ականջ դնելով ընտանիքի մասին հայտարարության խորհրդին:
- Նկարագրություն, թե ինչ եք անելու, որպեսզի լիարժեք ապրեք՝ համաձայն ձեր ընտրած սկզբունքի կամ վարդապետության:

Վարդապետության հիմնական դրույթները

Հետևյալ տեղեկությունը կազմվել է, օգտագործելով այս դասընթացի դասերի հիմնական դրույթները: Մեջբերումներին հաջորդող փակագծերում նշված թվերը ներկայացնում են *«Հավերժական ընտանիքը» ուսուցչի ձեռնարկի* (2015) դասերի համարները, որտեղ տվյալ նյութը կարելի է գտնել: Համեմատեք ձեր պատասխանը ստորև տրված տեղեկության հետ: Եթե այս ստուգման արդյունքում կա վարդապետության հիմնական դրույթ, որը դուք չեք ընդգրկել ձեր պատասխանի մեջ, նախքան հանձնելը կարող եք ուղղել ձեր պատասխանը: Հարկ չկա այդ տեղեկությունը բառացիորեն գրել ձեր պատասխանի մեջ, պարզապես հավաստիացեք, որ դուք հասկացել եք այդ վարդապետությունները և ներկայացրեք դրանք ձեր բառերով: Քանի որ 3-րդ հարցն առավելապես անձնական պատասխան է պահանջում, այդ հարցի համար հիմնական դրույթներ չկան:

1. Ինչո՞ւ է ընտանիքն այդքան կարևոր Երկնային Հոր երջանկության ծրագրում:

   Փրկության ծրագրի հիմնական նպատակները.

   - «Երկնային Հոր ծրագիրը ուղի է պատրաստում, որ մենք դառնանք մեր Երկնային Ծնողների նման» (3):
   - «Երկիրը ստեղծվեց, որպեսզի օգնի իրականացնել մարդու անմահությունը և հավերժական կյանքը» (4):

   Ինչպե՞ս են արդարակյաց ընտանիքներն օգնում իրականացնել այդ նպատակները հավերժության մեջ.

   - «Ընտանիքը նախաերկրային, մահկանացու և հավերժական կյանքի համար Աստծո ծրագրի առանցքային մասն է կազմում» (6):
   - «Անկման հետևանքով Ադամն ու Եվան կարողացան զավակներ ունենալ և նրանց սերունդները կարողացան առաջ ընթանալ դեպի հավերժական կյանք» (4):
   - «Ֆիզիկական մարմնի շնորհիվ մենք ենթարկվում ենք մահկանացու կյանքի պայմաններին, որոնք կարող են նախապատրաստել մեզ հավերժության համար» (5):

- «Երբ մենք մտնում ենք ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ, մենք կարող ենք վեհացվել սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում» (15):

2. Որո՞նք են ամուսնության համար Տիրոջ սահմանած չափանիշները:

   Ամուսինների և ծնողների աստվածային դերերը և պարտականությունները.

   - «Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», 129):
   - «Երբ ամուսինը և կինը երեխա են բերում աշխարհ, նրանք կատարում են Երկնային Հոր երջանկության ծրագրի մի մասը» (17):
   - «Ծնողներին պատվիրվում է ուսուցանել իրենց երեխաներին սիրել և ծառայել միմյանց, պահել Աստծո պատվիրանները և լինել օրինապահ քաղաքացիներ» (22):

   Փրկիչի դերը ամուսնության և ընտանիքի մեջ.

   - «Հիսուս Քրիստոսի Քավությունը մեզանից յուրաքանչյուրի համար հնարավոր է դարձնում ի վերջո ստանալ մեր Երկնային Հոր բոլոր խոստացած օրհնությունները» (24):
   - «Երբ ընտանիքները կառուցեն իրենց հիմքը Հիսուս Քրիստոսի վրա, սատանան զորություն չի ունենա կործանել նրանց» (19):

   Օրենքներ, որոնցով ղեկավարվում է մաքրաբարոյությունը և հավատարմությունը ամուսնության մեջ և այդ օրենքների հավերժական բնույթը.

   - «Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված է Աստծո կողմից» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» 129):
   - Մենք հայտարարում ենք նաև Աստծո այն պատվիրանը, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին («Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» 129) (16):
   - «Քաղաքացիական օրենքում փոփոխությունները չեն փոխում և չեն էլ կարող փոխել Աստծո սահմանած բարոյական օրենքը: Աստված ակնկալում է, որ մենք կհետևենք Իր պատվիրաններին և կպահենք դրանք՝անկախ հասարակության մեջ տիրող տարամետ կարծիքներից կամ միտումներից» (quoted in Gospel Topics, “Same-Sex Marriage,” lds.org/topics) (7):

Վերականգնման հիմունքները (Կրոն 225)

Հարցեր

1. Ինչպե՞ս կարող եմ տարբերել ճշմարտությունը կեղծիքից:

   Ձեր պատասխանը պետք է ընդգրկի հետևյալը.

   - Սուրբ գրությունների, ժամանակակից մարգարեների խոսքերի և Սուրբ Հոգու դերը ճշմարտությունը հաստատելու գործում:
   - Ուսումնասիրությունը, հավատքը և աղոթքը ինչպե՞ս կարող են օգնել ձեզ սովորել ճշմարտությունը:
   - Ինչպե՞ս գտնել, գնահատել և օգտագործել Եկեղեցու պատմության և հայտնված վարդապետության վերաբերյալ հավաստի աղբյուրները:
   - Ինչպե՞ս կարող եք ձեր սովորած սկզբունքները կիրառել, որպեսզի ճշմարտությունը զանազանեք կեղծիքից, երբ դուք կամ ձեր ծանոթներից մեկն առնչվում է ընթացիկ որոշման, մարտահրավերի կամ խնդրի հետ:

2. Ինչո՞ւ է ինձ համար կարևոր հասկանալ, որ «Ջոզեֆ Սմիթը … ավելի շատ բան արեց այս աշխարհի մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, որը երբևէ ապրել է նրա վրա»: (ՎևՈւ 135.3):

   Ձեր պատասխանը պետք է ընդգրկի հետևյալը.

   - Առաջին Տեսիլքի դերը ավետարանի Վերականգնման և ժամանակների լրության տնտեսության բացման մեջ:
   - Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված ճշմարտությունը ինչպես է օրհնել ձեր կյանքը:
   - Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված Քահանայության բանալիները կամ փրկող արարողություններն ինչպե՞ս են օրհնել ձեր կյանքը:
   - Ջոզեֆ Սմիթի դերը Վերականգնման գործում ինչպե՞ս է ձեզ ավելի մոտեցրել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

3. Վերականգնման հետևյալ կարևոր իրադարձություններից կամ վարդապետություններից մեկն ինչպե՞ս է օրհնել ձեր կյանքը:

   ա) Մորմոնի Գրքի երևան գալը, բ) Վարդապետություն և Ուխտերի հիմնական բաժինները և վարդապետությունը, գ) Եկեղեցու բացահայտված կազմակերպությունը, դ) քահանայության

վերականգնումը, ե) տաճարները և տաճարային աշխատանքը: Ձեր պատասխանը պետք է ընդգրկի հետևյալը.

- Ի՞նչ սովորեցիք այս իրադարձության կամ վարդապետության մասին՝ մասնակցելով այս դասընթացին:
- Այս իրադարձությունը կամ վարդապետությունը ինչպե՞ս է ցույց տալիս, որ երկնքները բաց են:
- Այս իրադարձությունը կամ վարդապետությունը ինչպե՞ս է օրհնել ձեր կյանքը կամ ինչո՞ւ է այն անձնապես կարևոր ձեզ համար:
- Ձեր վկայությունն այն մասին, թե ինչ եք սովորել վերականգնված ավետարանի մասին:

Վարդապետության հիմնական դրույթները

Հետևյալ տեղեկությունը կազմվել է՝ օգտագործելով այս դասընթացի դասերի հիմնական դրույթները: Մեջբերումներին հաջորդող փակագծերում նշված թվերը ներկայացնում են *«Վերականգնման հիմունքները՝ ուսուցչի ձեռնարկ»*-ի (2015) դասի համարը, որտեղ կարելի է գտնել տվյալ դրույթը: Համեմատեք ձեր պատասխանը ստորև տրված տեղեկության հետ: Եթե այս ստուգման արդյունքում կա վարդապետության հիմնական դրույթ, որը դուք չեք ընդգրկել ձեր պատասխանի մեջ, կարող եք նախքան հանձնելը ուղղել ձեր պատասխանը: Հարկ չկա այդ տեղեկությունը բառացիորեն գրել ձեր պատասխանի մեջ, պարզապես հավաստիացեք, որ դուք հասկացել եք այդ վարդապետությունները և ներկայացրեք դրանք ձեր բառերով: Քանի որ 3-րդ հարցն առավելապես անձնական պատասխան է պահանջում, այդ հարցի համար հիմնական դրույթներ չկան:

1. Ինչպե՞ս կարող եմ տարբերել ճշմարտությունը կեղծիքից:

   Սուրբ գրությունների, ժամանակակից մարգարեների խոսքերի և Սուրբ Հոգու դերը ճշմարտությունը հաստատելու գործում.

   - Որպես Աստվածաշնչի ուղեկիցներ՝ «Մորմոնի Գիրքը և Վարդապետություն և Ուխտերը ի հայտ եկան աշխարհի փրկության համար» (22):
   - «Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ իմանալ, թե արդյոք ճիշտ է այն, ինչ մենք կարդում ենք» (10):
   - «Եթե ուշադրություն դարձնենք մարգարեի խոսքերին, մենք պաշտպանված կլինենք չարից» (9):
   - «Երբ Տիրոջ ծառաները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ, նրանց խոսքերը հայտնում են Տիրոջ կամքը» (12):

   Ուսումնասիրությունը, հավատքը և աղոթքն ինչպե՞ս կարող են օգնել ձեզ սովորել ճշմարտությունը:

   - «Երբ հավատք ենք կիրառում ուսումնական գործընթացում, մենք արժանանում ենք Տիրոջ օգնությանը» (10):

- «Մեր ամենամեծ հարցերի պատասխանները մենք կարող ենք գտնել, երբ հնազանդվում ենք պատվիրաններին, ուսումնասիրում ենք տեղեկությունների պատշաճ աղբյուրներ՝ հատկապես ապրող մարգարեների խոսքերը, առաջնորդություն ենք փնտրում աղոթքի միջոցով և համբերություն ու հավատք ենք դրսևորում» (10):
- «Երբ հանդիպում ենք հարցերի կամ կասկածների, մենք պետք է ամուր կառչենք արդեն ունեցած ճշմարիտ գիտելիքից և վստահ լինենք, որ մենք կարող ենք պատասխան գտնել հետագա ուսումնասիրությունների միջոցով կամ Աստված կպատասխանի հետագայում» (4):

Ինչպե՞ս գտնել, գնահատել և օգտագործել հավաստի աղբյուրները.

- «Մենք կարող ենք անկեղծ հետաքրքրվողին հիշեցնել, որ համացանցի տեղեկությունները չունեն «ճշմարտության» զտիչ: Որևէ տեղեկություն, անկախ նրանից, թե որքան համոզիչ է, պարզապես ճշմարիտ չէ» (10, Նիլ Լ. Անդերսեն, «Զոզեֆ Սմիթ» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2014, 29):
- «Կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություններից խուսափելու համար նրանք, ովքեր փնտրում են ճշմարտությունը, Եկեղեցու և նրա պատմության մասին, պետք է տեղեկության վստահելի աղբյուրներ փնտրեն» (2):
- «Երբ սկսում ենք չափել ժամանակակից գործելակերպերը և առաջարկները ըստ Աստծո ծրագրի վերաբերյալ մեր գիտելիքների և Աստծո խոսքում ու Նրա ապրող մարգարեների ուսմունքներում տրված նախադրյալների, … մենք գիտենք, որ դա մեզ համար հավերժ ապահով հող է ստեղծում» (10; Dallin H. Oaks, “As He Thinketh in His Heart” [An Evening with a General Authority, Feb. 8, 2013], lds.org/broadcasts):

2. Ինչո՞ւ է ինձ համար կարևոր հասկանալ, որ «Զոզեֆ Սմիթը … ավելի շատ բան արեց այս աշխարհի մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, որը երբևէ ապրել է նրա վրա»: (ՎևՈւ 135.3):

   Առաջին Տեսիլքի դերը ավետարանի Վերականգնման և ժամանակների լրության տնտեսության բացման գործում:

   - «Հավերժական ճշմարտությունները վերականգնվեցին երկրի վրա, երբ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Զոզեֆ Սմիթին»(2):
   - «Երբ վկայություն ենք ստանում, որ Զոզեֆ Սմիթը տեսել է Հայր Աստծուն և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, մենք կարող ենք նաև իմանալ ավետարանի Վերականգնման ճշմարտացիության մասին» (2):
   - «Զոզեֆ Սմիթը կանչվել է Աստծո կողմից՝ վերականգնելու ավետարանը մեր տնտեսության համար» (1):

   Զոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված ճշմարտությունը ինչպե՞ս է օրհնել ձեր կյանքը:

- «Հիսուս Քրիստոսը կենդանի, փառավորված էակ է: Հիսուս Քրիստոսը Հոր Միածինն է: Հիսուս Քրիստոսը այս և այլ աշխարհների Արարիչն է» (13):
- «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ երկրի երեսին» (6):
- «Որպես Երկնային Հոր զավակներ մենք Նրա նման դառնալու ներուժ ունենք» (17):
- «Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը տվել է լրացուցիչ սուրբ գրություն, որը հաստատում, պարզաբանում և մեծացնում է ճշմարտության մասին մեր գիտելիքը» (12):

Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված քահանայության բանալիները կամ փրկող արարողությունները և ինչպես են դրանք օրհնել ձեր կյանքը.

- Ջոզեֆ Սմիթը ստացավ «միսիոներական աշխատանքի, հավերժական ընտանիքների և տաճարային աշխատանքի բանալիները» (14):
- «Մկրտվելուց առաջ մարդիկ պետք է լինեն խոնարհ, ապաշխարող, պատրաստակամ իրենց վրա վերցնելու Հիսուս Քրիստոսի անունը և վճռական ծառայելու Նրան մինչև վերջ» (6):
- «Սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանի վեհացում ստանալու համար մենք պետք է մտնենք ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ» (19):

Հիսուս Քրիստոսը և հավերժական ավետարանը (Կրոն 250)

Հարցեր

1. Ի՞նչ կարող եմ սովորել Փրկչից Երկնային Հոր կամքին հնազանդվելու վերաբերյալ:

   Ձեր պատասխանը պետք է ընդգրկի հետևյալը.

   - Ուսմունքներ կամ օրինակներ Փրկիչի հավերժական ծառայությունից, որոնք ներկայացնում են Նրա հնազանդությունն առ Երկնային Հայրը:
   - Հիսուսի հնազանդությունը Երկնային Հոր հանդեպ ինչպե՞ս է առնչվում մեր աշակերտությանը:
   - Ինչո՞ւ է Փրկիչի հնազանդության օրինակը կարևոր ձեզ համար, և ինչպե՞ս կարող է Նա օգնել ձեզ անհրաժեշտ քայլեր կատարել՝ ձեր աշակերտությունն ամրացնելու համար:
   - Ինչպե՞ս է Փրկիչի հնազանդության օրինակն օգնում ձեզ հնազանդվել Երկնային Հոր կամքին:

2. Ես ինչո՞ւ ունեմ Փրկիչի կարիքը:

   Ձեր պատասխանը պետք է ընդգրկի հետևյալը.

   - Հիմնական խոչընդոտները, որ պետք է հաղթահարենք մեր ընկած վիճակի պատճառով:
   - Իր հավերժական ծառայության մեջ Փրկիչի տարբեր դերերն ինչպե՞ս են օգնում Երկնային Հոր զավակներին հաղթահարել այդ խոչընդոտները:
   - Ի՞նչ կարող եմ անել Փրկիչի օգնությունը խնդրելու և ընդունելու համար:
   - Առնվազն մեկ օրինակ, թե ինչպես եք ձեր կյանքում զգացել Փրկիչի աստվածային օգնությունը՝ դժվարություններն ու խոչընդոտները հաղթահարելիս:

3. Այս դասընթացի ընթացքում ի՞նչ եմ սովորել Հիսուս Քրիստոսի և հավերժական ավետարանի մասին, որն օրհնել է իմ կյանքը:

Դուք կարող եք հիմնվել ձեր նախկին պատասխանների վրա, կամ կապել գաղափարներ ձեր նախորդ պատասխանների հետ, կամ գրել նոր թեմայի շուրջ:

- Մեկ կամ երկու նախադասությամբ ձևակերպեք ձեր սովորած վարդապետությունը:
- Բացատրեք այդ վարդապետությունը՝ օգտագործելով օրինակներ սուրբ գրություններից կամ մարգարեների խոսքերից:
- Կիսվեք, թե ինչպես են Փրկիչի ուսմունքները, օրինակը կամ Քավությունը օրհնել ձեր կյանքը:
- Գրեք ձեր վկայությունը, թե ինչ եք սովորել Հիսուս Քրիստոսի և հավերժական ավետարանի մասին:

Վարդապետության հիմնական դրույթները

Հետևյալ տեղեկությունը կազմվել է՝ օգտագործելով այս դասընթացի դասերի հիմնական դրույթները: Մեջբերումներին հաջորդող փակագծերում նշված թվերը ներկայացնում են *«Հիսուս Քրիստոսը և հավերժական ավետարանը» ուսուցչի ձեռնարկի* (2015) դասերի համարները, որտեղ տվյալ դրույթը կարելի է գտնել: Համեմատեք ձեր պատասխանը ստորև տրված տեղեկության հետ: Եթե այս ստուգման արդյունքում կա վարդապետության հիմնական դրույթ, որը դուք չեք ընդգրկել ձեր պատասխանի մեջ, նախքան հանձնելը կարող եք ուղղել ձեր պատասխանը: Հարկ չկա այդ տեղեկությունը բառացիորեն գրել ձեր պատասխանի մեջ, պարզապես հավաստիացեք, որ դուք հասկացել եք այդ վարդապետությունները և ներկայացրեք դրանք ձեր բառերով: Քանի որ 3-րդ հարցն առավելապես անձնական պատասխան է պահանջում, այդ հարցի համար հիմնական դրույթներ չկան:

1. Ի՞նչ կարող եմ սովորել Փրկիչից՝ Հոր կամքին հնազանդվելու վերաբերյալ:

   Փրկիչի ծառայությունից ուսմունքներ կամ օրինակներ, որոնք ներկայացնում են Նրա հնազանդությունն առ Երկնային Հայրը:

   - «Եհովան ընտրվել էր ի սկզբանե: Եհովան ընտրվեց, որովհետև Նա ձգտում էր կատարել Հոր կամքը և ցանկանում էր ողջ փառքը տալ Հորը» (2):
   - «Չնայած [Հիսուս Քրիստոսը] անմեղ էր, Նա մկրտվեց կատարելու ամենայն արդարություն» (8, «Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների վկայությունը, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի» *Ensign* կամ *Լիահոնա,* ապր. 2000, 2):
   - «Փրկության ծրագիրը պահանջում էր, որ Քավությունն իրագործելու համար Հիսուսը լիներ կատարյալ հնազանդ» (9):
   - «Իմ անձիցը ոչինչ չեմ անում. այլ ինչպես իմ Հայրը սովորեցրեց ինձ, … որովհետև ես միշտ նորան հաճելի բաներն եմ անում» (Հովհաննես 8.28–29):

Հիսուսի հնազանդությունը Հոր հանդեպ ինչպե՞ս է առնչվում մեր աշակերտությանը:

- «Փրկիչի նման մենք արդարություն ենք կատարում՝ հնազանդվելով հավերժական ավետարանի արարողություններին և ուխտերին» (8):
- «Հիսուս Քրիստոսի աշակերտը լինելու համար հնազանդություն և զոհաբերություն է պահանջվում :… Աշակերտը պետք է միշտ պատրաստակամ թողնի ամեն ինչ և հետևի Հիսուս Քրիստոսին» (10):
- «Մենք կարող ենք գայթակղությանը դիմակայելու և հնազանդ լինելու ուժ ստանալ, եթե հետևենք Հիսուս Քրիստոսի օրինակին, այսինքն՝ փնտրենք ոչ թե մեր, այլ Հոր կամքը» (9):

2. Ես ինչո՞ւ ունեմ Փրկիչի կարիքը:

Հիմնական խոչընդոտները, որ պետք է հաղթահարենք մեր ընկած վիճակի պատճառով:

- «Մենք բոլորս հոգևոր մահ ենք ճաշակել առանձնացած լինելով Աստծո ներկայությունից, և մենք բոլորս ենթակա ենք ժամանակավոր մահվան, որը ֆիզիկական մարմնի մահն է (տես Ալմա 42.6–9, ՎևՈւ 29.41–42)» (*Հավատքին հավատարիմ. ավետարանական տեղեկատու* [2004], 15):
- «Մեր ընկած վիճակում մենք ենթակա ենք ընդդիմության և գայթակղության: Գայթակղությանն անձնատուր լինելով, մենք հեռանում ենք Աստծուց (տես Հռովմայեցիս 3.23)» (*Հավատքին հավատարիմ. ավետարանական տեղեկատու,* 15):

Ինչպե՞ս են Իր հավերժական ծառայության մեջ Փրկիչի տարբեր դերերն օգնում Երկնային Հոր զավակներին հաղթահարել այդ խոչընդոտները.

- «Եհովան արարեց Երկիրը, որպեսզի ապահովեր մի վայր, որտեղ Աստծո զավակները կարող էին ապրել և զարգանալ, առաջադիմելով դեպի հավերժական կյանք» (4):
- «Որպես Հոր Միածին Որդին մարմնում, Հիսուս Քրիստոսը կարողացավ կատարել Քավող զոհաբերությունը, որը Նրանից պահանջում էր դիմանալ ավելիին, քան մահկանացու մարդը կարող էր, այդպիսով կատարելով Իր դերը Հոր ծրագրում» (7):
- «Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք Սուրբ Հոգու միջոցով սփոփանք և ուժ ստանալ՝ դիմանալով «ցավերին և չարչարանքներին, և փորձություններին ամեն տեսակի» (Ալմա 7.11)» (16):
- «Հիսուս Քրիստոսի Քավության և Հարության շնորհիվ մահկանացու կյանքում բոլոր ծնվածները հարություն կառնեն և ետ կբերվեն Աստծո ներկայություն դատվելու» (19):

- «Հոգիների աշխարհում Հիսուսը կազմակերպեց մահացածների փրկության աշխատանքը» (18):
- «Հիսուս Քրիստոսը մեր Բարեխոսն է Հոր առաջ» (24):
- «Փրկիչը կդատի մեզ ըստ մեր խոսքերի, մտքերի, գործերի և մեր սրտերի ցանկությունների» (26):

Ի՞նչ պետք է անենք, որ խնդրենք և ընդունենք Փրկիչի օգնությունը:

- «Մենք կարող ենք հաղթել սատանային, ապավինելով Հիսուս Քրիստոսին, ով իրագործեց Քավությունը, բերելով մեր վկայությունը և հավատարիմ մնալով դրան» (3):
- «Այս երկրագնդի վրա ապրելու ընթացքում մշտապես մեր կյանքի կենտրոնում պահելով Փրկիչին՝ մենք առավել մեծ օրհնություններ ձեռք կբերենք հավերժությունում» (2):
- «Եթե հաղորդությունն ընդունում ենք աղոթքով և ապաշխարող հոգով, մենք կարող ենք մեղքերի թողություն ստանալ, ինչպես ստացանք մկրտվելիս» (15):
- «Երբ ընդունում ենք Հիսուս Քրիստոսին և Աստծո պատվիրաններին հնազանդվելու ուխտեր կապում ու պահում, մենք դառնում ենք ծնված որդիներն ու դուստրերը Քրիստոսի» (24):

Մորմոնի Գրքի ուսմունքները և վարդապետությունը (Կրոն 275)

Հարցեր

1. 1. Ո՞րն է Մորմոնի Գրքի դերը ձեր կյանքում:

   Ձեր պատասխանը պետք է ընդգրկի հետևյալը.

   - Մորմոնի Գրքի հիմնական նպատակները և նրա դերը ճշմարտության հաստատման գործում:
   - Խոստացված օրհնություններ նրանց համար, ովքեր ուսումնասիրում են Մորմոնի Գիրքը:
   - Ինչո՞ւ է կարևոր հասկանալ Մորմոնի Գրքի աստվածային ծագումը:
   - Օրհնություններ, որոնք դուք տեսել, զգացել կամ վերապրել եք Մորմոնի Գրքի այս դասընթացի ուսումնասիրության ժամանակ:
   - Ինչպե՞ս կբարելավվի Մորմոնի Գրքի ձեր ուսումնասիրությունն ու կիրառումը՝ ելնելով այս դասընթացի փորձառությունից:

2. 2. Համաձայն Մորմոնի Գրքի, ինչպե՞ս Քրիստոսը հնարավոր դարձրեց ձեր վեհացումը:

   Ձեր պատասխանը պետք է ընդգրկի հետևյալը.

   - Քրիստոսի վարդապետության բացատրությունը և խոստացված օրհնություններ նրանց համար, ովքեր հետևում են դրան:
   - Ինչպե՞ս Քրիստոսը հաղթահարեց հոգևոր և ֆիզիկական խոչընդոտները յուրաքանչյուրիս համար:
   - Ինչպե՞ս աճեց ձեր երախտագիտությունը և պարտավորվածությունը Հիսուս Քրիստոսի հանդեպ այս դասընթացի ընթացքում:
   - Դուք ի՞նչ եք անում ցույց տալու համար, որ ընդունում եք Հիսուս Քրիստոսին որպես ձեր Տեր և Փրկիչ:

3. Մորմոնի Գրքից ի՞նչ ճշմարտություններ են ձեզ օգնել:

Դուք կարող եք հիմնվել ձեր նախկին պատասխանների վրա, կամ կապել գաղափարներ ձեր նախորդ պատասխանների հետ, կամ գրել նոր թեմայի շուրջ:

- Մորմոնի Գրքից թվարկեք երեքից հինգ սկզբունքներ կամ վարդապետություններ, որոնք դուք սովորեցիք կամ որոնք նշանակալից դարձան ձեզ համար այս դասընթացին մասնակցելու շնորհիվ:
- Ձեր կազմած ցուցակից ընտրեք որևէ սկզբունք կամ վարդապետություն և մանրակրկիտ բացատրեք այն՝ օգտագործելով սուրբ գրություններից օրինակներ, ինչպես նաև մարգարեների խոսքերը:
- Կիսվեք, թե ինչու է այս սկզբունքը կամ վարդապետությունը կարևոր ձեզ համար և ինչպես դուք կգործեք համաձայն դրա:
- Գրեք ձեր վկայությունն այն մասին, թե ինչ եք սովորել այս դասընթացի ընթացքում Մորմոնի Գրքի ուսումնասիրությունից:

Վարդապետության հիմնական դրույթները

Հետևյալ տեղեկությունը կազմվել է՝ օգտագործելով այս դասընթացի դասերի հիմնական դրույթները: Մեջբերումներին հաջորդող փակագծերում նշված թվերը ներկայացնում են *«Մորմոնի Գրքի ուսմունքներն ու վարդապետությունը» ուսուցչի ձեռնարկի* (2015)դասերի համարները, որտեղ տվյալ դրույթը կարելի է գտնել: Համեմատեք ձեր պատասխանը ստորև տրված տեղեկության հետ: Եթե այս ստուգման արդյունքում կա վարդապետության հիմնական դրույթ, որը դուք չեք ընդգրկել ձեր պատասխանի մեջ, կարող եք նախքան հանձնելը ուղղել ձեր պատասխանը: Հարկ չկա այդ տեղեկությունը բառացիորեն գրել ձեր պատասխանի մեջ, պարզապես հավաստիացեք, որ դուք հասկացել եք այդ վարդապետությունները և ներկայացրեք դրանք ձեր բառերով: Քանի որ 3-րդ հարցն առավելապես անձնական պատասխան է պահանջում, այդ հարցի համար հիմնական դրույթներ չկան:

1. 1. Ո՞րն է Մորմոնի Գրքի դերը ձեր կյանքում:

   Մորմոնի Գրքի հիմնական նպատակները և նրա դերը ճշմարտության հաստատման գործում.

   - «Աստված վերջին օրերում առաջ բերեց Մորմոնի Գիրքը, որպեսզի համոզի բոլոր մարդկանց, որ Հիսուսը Քրիստոսն է» (1):
   - «Մորմոնի Գիրքը պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը» (6):
   - «Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը միասին վկայում են Հիսուս Քրիստոսի մասին» (7):

   Խոստացված օրհնություններ նրանց համար, ովքեր ուսումնասիրում են Մորմոնի Գիրքը.

- «Մորմոնի Գրքի ուսմունքներն այսօր մեծ արժեք ունեն մեզ համար, քանի որ գրողները տեղյակ էին այն խնդիրներին, որոնց մենք պետք է հանդիպեինք» (6):
- «Երբ մենք ուսումնասիրում ենք Մորմոնի Գիրքը և կիրառում ենք դրա ուսմունքները, մենք պաշտպանված ենք լինում դևից և մեր օրերի կեղծ ուսմունքներից ու հասկացություններից» (11):

2. 2. Համաձայն Մորմոնի Գրքի, ինչպե՞ս Քրիստոսը հնարավոր դարձրեց ձեր վեհացումը:

Քրիստոսի վարդապետության բացատրությունը և խոստացված օրհնություններ նրանց համար, ովքեր հետևում են դրան.

- «Երբ մենք գալիս ենք դեպի Քրիստոսը և պահում ենք պատվիրանները, մենք կարող ենք ավելի նմանվել Նրան ու մեր Երկնային Հորը, և մենք կփրկվենք» (3):
- «Եթե մենք ապրում ենք Քրիստոսի վարդապետության համաձայն, մենք կարող ենք ճաշակել Քավության օրհնությունները և ստանալ հավերժական կյանք» (8):
- «Որպեսզի ստանանք ներման ողորմած օրհնությունները, մենք պետք է հավատք գործադրենք առ Հիսուս Քրիստոսն՝ ի ապաշխարություն» (16):

Ինչպե՞ս Քրիստոսը հաղթահարեց հոգևոր և ֆիզիկական խոչընդոտները յուրաքանչյուրիս համար.

- «Իր Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը հաղթահարեց ֆիզիկական և հոգևոր մահվան ազդեցությունները» (5):
- «Փրկիչն Իր վրա վերցրեց մեր ցավերը, հիվանդություններն ու թուլությունները, որպեսզի Նա կարողանա օգնել մեզ, երբ մենք հանդիպենք մահկանացու կյանքի դժվարություններին» (5):
- «Քանի որ Հիսուս Քրիստոսը կոտրել է մահվան կապանքները, մենք բոլորս հարություն կառնենք և կստանանք անմահ մարմին» (18):

Հիմնական ընտրովի դասընթացի հարցեր

Ուսուցչի հրահանգներ

«Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացը կարող է օգտագործվել ինստիտուտի ցանկացած դասընթացի հետ, որը Հիմնական դասընթաց չէ: Այն բաղկացած է մի շարք հարցերից, որոնք հանդիսանում են հանձնարարված ընթերցանության և դասարանում մասնակցության կարևոր լրացումը: Հրավիրելով և օգնելով ուսանողներին ուսումնասիրել, կիրառել, գրանցել սկզբունքներն ու վարդապետությունը և կիսվել դրանցով, կարող եք օգնել նրանց ամրացնել իրենց վկայություններն ու խորացնել իրենց դարձը:

Ըստ ձեր հրահանգի, ուսանողները պատասխանում են ուսանողի հրահանգների թերթիկում տրված յոթ հարցերից երեքին: Ուսանողների պատասխանները հիմնականում պիտի բխեն այն նյութից, որը նրանք ուսումնասիրել և կիրառել են դասընթացի ժամանակ: Չնայած «Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացի որոշ մանրամասների մատուցումը պետք է հարմարեցվի դասարանին և ուսանողներին անհատապես, հետևյալ քայլերը կօգնեն ձեզ և ձեր ուսանողներին հաջողությամբ անցնել այս փորձառությունը.

1. *Պատրաստվել.* Նախքան դասընթացը վերանայեք հարցերը և ծրագիր կազմեք «Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացի մատուցման համար: Ձեր պատրաստությունը կարող է ներառել եղանակներ, որոնցով կարող եք հարցերը ներկայացնել դասարանին և բացատրել «Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացին վերաբերող ակնկալիքները, ինչպես օրինակ՝ ուսանողների պատասխանների վերանայումն ու ներկայացման ժամկետները, պատասխանների երկարությունն ու դրանց ձևաչափը: Խորհուրդ է տրվում դասընթացի ընթացքում վերանայել երեք ուսանողների պատասխաններից յուրաքանչյուրը երեք տարբեր օրեր՝ ձեր ընտրությամբ:

2. *Սահմանել հստակ ակնկալիքներ.* Դասընթացի սկզբում ուսանողներին տվեք ուսանողի հրահանգների թերթիկում գտնվող հարցերից մեկական օրինակ: Սա բավարար ժամանակ կապահովի, որպեսզի ուսանողները կիսամյակի ընթացքում ուսումնասիրեն, կիրառեն և գրանցեն հարցերին տրվող իրենց պատասխանները: Օգնեք նրանց հասկանալ «Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացի նպատակը: Հստակ արտահայտեք ձեր ակնկալիքները

նրանց պատասխանների վերաբերյալ, ներառելով դրանց վերանայման ու ներկայացման ժամկետները:

3. *Լինել հետևողական.* Դասընթացի ժամանակ մշտապես քաջալերեք և օգնեք բոլոր ուսանողներին, երբ նրանք աշխատում են ավարտել «Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացի հարցերը: Եղանակներ փնտրեք հարցերը ուսումնական ծրագրի հետ կապելու համար կամ միացրեք դրանք դասարանական վարժություններին: Խնդրեք ուսանողներին, որ նրանք դասարանում կամ դասից դուրս աշխատեն իրենց պատասխանների վրա:
4. *Վերստուգում և ուղղում.* Ուսանողներին հիշեցրեք և հանձնարարեք դասարան բերել հանձնարարված հարցերին իրենց պատասխանները ստուգման համար նախատեսված օրերին: Խնդրեք ուսանողներին իրենց պատասխաններում բացատրել, կիսվել և վկայել այս դասընթացի ընթացքում իրենց սովորածի և կիրառածի մասին: Ուսանողները կարող են օգտվել առիթից և ստուգել միմյանց աշխատանքները զույգերով կամ փոքր խմբերով: Ուսանողներին խրախուսեք, անհրաժեշտության դեպքում, ուղղել իրենց պատասխանները՝ նախքան կհանձնեն դրանք:
5. *Հանձնում.* Ուսանողներն ավարտում են «Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացը, ներկայացնելով բոլոր հարցերի պատասխանները՝ ըստ ձեր ակնկալիքների: *Ձեր կարծիքը ուսանողների պատասխանների վերաբերյալ ցանկալի է, բայց ոչ պարտադիր:* WISE դասամատյանում գրանցեք այն ուսանողների մասին տեղեկությունը, ովքեր ներկայացրել են իրենց պատասխանները:

Նշում. Հավաստիացեք, որ հատուկ կարիքներով, հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող ուսանողներն ապահովված են հարմարություններով, որոնք անհրաժեշտ են այս գնահատմանը իրենց հասակակիցների հետ հավասար հիմունքներով մասնակցելու համար: Գուցե կարիք լինի նյութը խոշոր տառերով տպել կամ լսողական տարբերակով ապահովել, հնարավորություն տալ ուսանողներին գրել պատասխանները ուրիշների օգնությամբ, թույլ տալ նրանց գրելու փոխարեն բանավոր պատասխանել կամ թելադրել իրենց պատասխանները գրագրին կամ ձայնագրիչին: Այցելեք lds.org/topics/disability կայք և գտեք ընդհանուր տեղեկություններ հաշմանդամություն ունեցող անհատներին օգնելու համար:

Ուսանողի հրահանգներ

«Խորացնել ուսումնառության փորձառությունը» դասընթացը բաղկացած է մի շարք հարցերից, որոնք դասարանում ձեր մասնակցության և հանձնարարված ընթերցանության ուսումնասիրության կարևոր լրացումն են հանդիսանում: Դասընթացի ընթացքում, աշխատելով այդ հարցերի պատասխանների վրա, երբ ուսումնասիրում, կիրառում, գրանցում և կիսվում եք սկզբունքներով և վարդապետությամբ, դուք կամրացնեք ձեր վկայությունը և կխորացնեք ձեր դարձը դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Ելնելով այն վարդապետությունից, սկզբունքներից և տեղեկությունից, որ դուք ուսումնասիրել ու կիրառել եք այս դասընթացի ժամանակ, պատասխանեք հետևյալ յոթ հարցերից ԵՐԵՔԻՆ: (Ձեր ուսուցիչը կարող է հանձնարարել հատուկ հարցեր:) Ձեր պատասխանը գրելիս հաշվի առեք առաջարկները, որոնք տրված են ստորև՝ «Պատասխաններ» բաժնում: Պատրաստ եղեք կիսվել այն ամենով, ինչ ուսումնասիրել և կիրառել եք, դասարան բերելով ձեր պատասխանները ուսուցչի նշած ստուգման ժամկետներում:

Հարցեր

1. Ինչպե՞ս սկսեցիք ավելի լավ ճանաչել ձեր Երկնային Հորը:
2. Ի՞նչն օգնեց ձեզ ավելի լիարժեք հասկանալ և ապավինել Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությանը:
3. Ինչպե՞ս է աճել ձեր վկայությունը ավետարանի Վերականգնման վերաբերյալ:
4. Ի՞նչն է օգնել ձեզ ավելի արժանավոր դառնալ տաճարային օրհնություններին:
5. Այս դասընթացի ո՞ր ճշմարտություններն են օրհնել ձեր կյանքը:
6. Ինչպե՞ս եք ուժեղացրել ձեր վկայությունը _____ : (Ուսուցիչը կտրամադրի ձեզ սկզբունքը կամ վարդապետությունը այս հարցի համար:)
7. Ինչպե՞ս է ձեր կյանքը լավացել, քանի որ դուք խորացրել եք ձեր ըմբռնումը_____ : (Ընտրեք հետևյալ վարդապետական թեմաներից ՄԵԿԸ:)
   - Աստվածագլուխ
   - Փրկության Ծրագիրը
   - Հիսուս Քրիստոսի Քավությունը
   - Վերականգնում
   - Մարգարեներ և հայտնություն
   - Քահանայություն և քահանայության բանալիներ
   - Արարողություններ և ուխտեր
   - Ամուսնություն և ընտանիք
   - Պատվիրաններ

Պատասխան

Ընդգրկեք հետևյալը յուրաքանչյուր պատասխանի մեջ.

- *Բացահայտեք մի սկզբունք,* որը դարձել է ավելի իմաստալից ձեզ համար, երբ մասնակցել եք այս դասընթացին:

- *Բացատրեք վարդապետությունը՝* օգտագործելով ձեր բառերը, հատվածներ սուրբ գրություններից կամ ապրող մարգարեների խոսքերը:
- *Կիսվեք որևէ փորձառությամբ,* երբ դուք վերջերս զգացել եք վարդապետության զորությունը ձեր կյանքում:
- *Կիսվեք* մտքերով այն մասին, թե ձեր փորձառությունն ինչպես է խորացրել ձեր դարձը դեպի Քրիստոսի ավետարանը:

Նշում. Եթե դուք հատուկ կարիքներ, հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեք, խոսեք ձեր ուսուցչի հետ, որպեսզի նա հարմարություններ ստեղծի և օգնի ձեզ ավարտել այս փորձառությունը:

Դասընթացի ուսումնասիրության օրագիր

Պահեք դասընթացի ուսումնասիրության օրագիր, որում կանոնավոր գրի առեք այն ամենը, ինչ սովորել եք, ինչպես եք կիրառել այն, և ինչպես է այն մեծացրել ձեր հավատքն առ Հիսուս Քրիստոս: Սա թույլ կտա ձեզ անդրադառնալայն բազում օրհնություններին, որոնք դուք ստացել եք Աստծուց և հասկանալ դրանք: Օրագիրը կարող է լինել նաև ոգեշնչման և ուժի աղբյուր: Դասընթացի ավարտին դուք կհաղորդեք ձեր ուսուցչին, որ կանոնավոր պահել եք դասընթացի ուսումնասիրության օրագիր և ինչպես է ձեր փորձառությունը զորացրել ձեր հավատքն առ Հիսուս Քրիստոս:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը (1928–2015) ուսուցանել է.

«Ապահով տեղում գրեք այն կարևոր բաները, որոնք դուք սովորել եք Հոգուց: Դուք կպարզեք, որ երբ գրի եք առնում արժեքավոր տպավորությունները, դրանք ավելի հաճախ են առաջանում: Բացի այդ, այն գիտելիքը, որ դուք ձեռք եք բերում, մատչելի կլինի ձեր ողջ կյանքի ընթացքում» (Richard G. Scott, "To Acquire Knowledge and the Strength to Use It Wisely," *Ensign*, June 2002, 32):

Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահությունից, նույնպես խոսել է հոգևոր տպավորությունները գրի առնելու մասին.

«Ես կատարում էի Եկեղեցու հանձնարարությունը, որի պատճառով ուշ տուն վերադարձա:

… Հենց հասա դռան մոտ, ես իմ մտքում լսեցի … «Ես այս փորձառությունները չեմ տալիս քեզ համար: Գրի առ դրանք»:

…Եվ երբ ես գրի էի առնում, ընթացքում հասկացա իմ մտքում հնչած խոսքերը: Ես պետք է գրառումներ անեի իմ երեխաների համար, որ նրանք մի օր հետագայում կարդային, թե ինչպես եմ տեսել Աստծո ձեռքը՝ մեր ընտանիքին օրհնելիս:

Տարիներ շարունակ, ամեն օր, ես գրում էի օրը մի քանի տող: Նախքան գրելը, ես խորհում էի այս հարցի մասին. «Արդյո՞ք տեսել եմ, թե ինչպես է Աստծո ձեռքը օգնության հասնում

մեզ, կամ մեր երեխաներին, կամ մեր ընտանիքին այսօր: Երբ ես գրառում էի կատարում, սկսեց ինչ-որ բան տեղի ունենալ:

Ավելի քան երբևէ, իմ սրտում սկսեց աճել երախտագիտությունը: Վկայությունս աճեց: Ավելի քան երբևէ ես համոզվում էի, որ մեր Երկնային Հայրը լսում է և պատասխանում աղոթքներին: Ես ավելի մեծ երախտագիտություն զգացի, քանի որ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ ես մեղմացա ու զտվեցի: Եվ ես սկսեցի ավելի վստահ զգալ, որ Սուրբ Հոգին կարող է շատ բաներ բերելմեր հիշողության մեջ, նույնիսկ այն բաները, որոնք մենք չէինք նկատել կամ ուշադրություն դարձրել, երբ դրանք տեղի էին ունեցել: (Հենրի Բ. Այրինգ, «Օ Հիշի՜ր, հիշի՜ր», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2007, 66–67):

Ավելի շատ տեղեկությունների համար տես նաև 1 Նեփի 1.1–3, 6.3–6, Ալմա 37.8–9, 3 Նեփի 23.6–13, Մովսես 6.5, 45-46:

Ստեղծել հարմարություններ հաշմանդամ ուսանողների համար

«Խորացնել ուսումնառության փորձառությունը» (ԽՈՒՓ) դասընթացի հարմարությունների ստեղծման նպատակն է հնարավորություն տալ հատուկ կարիքներ, հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող ուսանողներին մասնակցել ԽՈՒՓ դասընթացին այլ ուսանողների հետ հավասար հիմունքներով: Ուսուցիչները պետք է ստեղծեն հարմարություններ, որոնք կհամապատասխանեն հատուկ կարիքներ, հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող իրենց ուսանողներին: Հաշվի առեք հետևյալ ուղեցույցները,երբ ստեղծում եք հարմարություններ ձեր ուսանողների համար.

- Հայտնաբերեք ուսանողներին, ովքեր հավանաբար կունենան հատուկ կարիքներ կամ հաշմանդամություն: Առանձնազրույց ունեցեք յուրաքանչյուր ուսանողի հետ, որպեսզի բացահայտեք նրանց հատուկ կարիքները: Լսեք ուշադիր և տրամադրվեք լավատեսորեն:
- Աշխատեք ծնողների և Եկեղեցու ղեկավարների հետ, որպեսզի կազմեք ծրագիր, որը կհամապատասխանի ուսանողների հատուկ կարիքներին: Մինչ տարբերակներից մեկը կարող է լինել ԽՈՒՓ դասընթացը ուսանողի հետ տուն ուղարկելը, զգույշ եղեք ծնողներին ծանրաբեռնելուց: Լավագույն ձևով ուսանողների և ծնողների համար ընտրեք ամենաարդյունավետ եղանակը:
- Ապահովեք հարմարությունները: Անհատական հարմարությունների առկայությունը պետք է գաղտնի մնա: Անհնար է թվարկել բոլոր հնարավոր հարմարությունները, սակայն հնարավոր հարմարությունների մի քանի օրինակներ բերված են ստորև.
    - *Ցուցադրում.* Ուսանողին ապահովեք ԽՈՒՓ-ի լսողական տարբերակով, բանավոր ներկայացրեք ԽՈՒՓ-ի հրահանգները կամ ապահովեք մեծ տառերով տպված ԽՈՒՓ-ի տարբերակը:
    - *Պատասխան.* Թույլ տվեք, որ ուսանողը ԽՈՒՓ-ի հարցերին բանավոր պատասխանի, կամ թույլ տվեք, որ պատասխանները թելադրվեն գրագրին կամ ձայնագրիչին:

- Խուսափեք այնպիսի հարմարությունների ստեղծումից, որոնք կփոխեն կամ կնվազեցնեն ուսանողի ուսումնառության ակնկալիքները:
- Ցուցաբերեք Քրիստոսանման սեր յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ և հետևեք Սուրբ Հոգու հուշումներին՝ ուսանողների կարիքները բավարարելու համար հարմարություններ ստեղծելիս:
- Այցելեք lds.org/topics/disability կայք և գտեք ընդհանուր տեղեկություններ հաշմանդամություն ունեցող անհատներին օգնելու համար:

ՍԵՄԻՆԱՐԻԱՆԵՐ և ԿՐՈՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ